

## Արթուր Օհանյան

Ծնվել է 1966 թվականի հուլիսի 26-ին Կապանում:

1973-1981թթ. սովորել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որից հետո ուսումը շարունակել թիվ 27 գիշերօթիկ դպրոցում, որն էլ գերազանցությամբ ավարտել է 1983թ.:

1984-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որն ավարտել է 1991 թվականին իրավագիտությունի իրավաբան մասնագիտությամբ:

1984-86թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում:

1991-1992թթ. աշխատել է Կապանի տրիկոտաժի արտադրական միավորումում որպես իրավախորհրդատու:

1992-1993թթ.՝ Կապանի դատախազությունում ստաժորքննիչ:

1993-1994թթ.՝ Կապանի միջշրջանային դատախազության քննիչ:

1994-1996թթ.՝ Կապանի միջշրջանային դատախազի օգնական:

1996թ. հունվարին նախագահի հրամանագրով նշանակվել է Կապանի ժողդատարանի դատավոր, 1996-1999թթ.՝ Կապանի ժողդատարանի նախագահ:

1999-2005թթ.՝ Երևանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի դատավոր, 2005-2006թթ.՝ ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի նախագահ:

2006թ. ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին թիվ Հ.Օ.34ն օրենքի համաձայն, շարունակել է պաշտոնավարել Երևանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում:

2018թ. մարտի 14-ին ՀՀ նախագահի ՆՀ-168-Ա հրամանագրի համաձայն, դադարեցվել են Երևանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունները: